ԴՊՐՈՑԻ ՃԱՄՓԱՆ

Նպատակ

Աջակցել Տավուշի մարզի Բերդ տարածաշրջանում գտնվող 16 գյուղի 328 ընտանիքին, որպեսզի նրանք կարողանան պատրաստվել իրենց երեխաների առաջին ուսումնական տարվան:

Գործողություններ

- Բերդի տարածաշրջանի 16 գյուղի 20 դպրոց հաճախող սաներին տրամադրել դպրոցական պայուսակ և անհրաժեշտ պարագաներ առաջին ուսումնական տարվա համար
- Աջակցել ընտանիքներին՝ ուսումնական տարին առանց պարտքերի սկսել

Չնայած այն բանի, որ աղքատությունը պատճառ չի հանդիսանում Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի երեխաների դպրոցից դուրս մնալուն, այն շարունակում է լուրջ խնդիր մնալ տարածաշրջանում, ինչն էլ շատ ընտանիքների համար դժվարություն է ստեղծում՝ երեխաների համար անհրաժեշտ դպրոցական պարագաներ գնելու հարցում : Այս դժվարությունները հաղթահարելու համար ծնողները սովորաբար պարտքով գումար են վերցնում, որպեսզի կարողանան իրենց երեխաներին ուղարկեն դպրոց: Մեր ծրագրի նպատակն է ապահովել 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում առաջին դասարան հաճախող երեխաներին անհրաժեշտ դպրոցական պայուսակով և գրենական իտույքներով, որն էլ կօգնի իրենց անցկացնել հաջող ուսումնական տարի դպրոցում, ինչու չէ օգտագործել իրերի մեծ մասը նաև հաջորդ տարիներին:

Համաձայն որոշ տվյալների, Տավուշի մարզի Բերդ տարածաշրջանի 16 գյուղում կա 328 վեց տարեկան երեխա, որոնք 2017թ. սեպտեմբերի 1-ին հաճախելու են առաջին դասարան: Ընդամենը յուրաքանչյուր երեխայի համար 15 ԱՄՆ դոլարի համարժեք դրամով մենք կկարողանանք տրամադրել բարձրորակ պայուսակ, տետրեր, գրիչներ, մատիտներ, քանոն, ռետին, գունավոր թղթեր, նկարչական ալբոմ, ինչպես նաև ջրաներկ և վրձին: Այս ամենը երեխաները իհարկե կարող են օգտագործել նաեւ գալիք տարիներին, որն էլ իրենց կօգնի ավելի սիրով և աշխատասիրությամբ սովորել դպրոցում: Ձեր հանգանակությունը ապագայի նոր դռներ կբացի երեխաների համար:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	ՄԻԱՎՈՐ ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Դպրոցական պայուսակ	328	8	2624
Դպրոցական պարագաներ	328	7	2296
Ճանապարհածախս պայուսակները տեղափոխելու համար	1	200	200

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$5,120**